№ 56 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 21 **1892** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 21 № 56

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութեան անդամները հրաւիրվում են տարեկան ընդհանուր ժողովին, որը լինելու է կիրակի օր, մայիսի 24-ին, կէսօրից յետոյ ժամը 2-ին, նախագահութեամբ ընկերութեան հիմնադիր և պատուաւոր անդամ բարձր Ա. Նիկոլայի: Պարապմունքի առարկաներն են. 1) Ընկերութեան՝ 1890 և 1891 թվի գործունէութեան հաշիւը. 2) Թիֆլիսի այգեգործական դպրոցի՝ 1890 և 1891 թ. գործունէութեան հաշիւը. 3) Ն. Տարասենովի զեկուցումը՝ «Բոլոր հարստութիւնների հիմքն է երկրագործութիւնը» վերնագրով. 4) պ. Մուրոմցովի զեկուցումը՝ «Փորձնական գիւղատնտեսական կայարանի հիմնարկութիւնը Պատարէուլի գիւղում». 5) Խորհրդի անդամների, քարտուղարի և գանձապահի ընտրութիւն:

Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սևան ծովի կղզին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խրիմեան և Էջմիածին. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Նեղքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կաթողիկոսական ընտրութեան պատմութիւնը.

ՍԵՒԱՆ ԾՈՎԻ ԿՂԶԻՆ

Սևան ծովի կղզին հեռուից տեսնողը՝ հիանում է այդ տեսարանից, բայց կղզու վրա ոտք դնողը հիասթափվում է անմիջապէս: Կեղտ, քարուքանդ շէնքեր, անհոգութիւն, անկարգութիւն,—ահա տեսարանը, որ ներկայանում է այցելուի աչքերին: Մարդու սիրտն է ցաւում, տեսնելով վանքի այդ անկարգ դրութիւնը: Էջմիածին գնացող թիւրքահայ աշխարհական պատգամաւորներից մինը, Սևան վանքն այցելելուց յետոյ բացականչեց. „այդ վանքն այնքան անկարգ դրութեան մէջ է, այն ինչ դա, եթէ գտնվէր աշխատասէր, անձնուէր և եռանդոտ հոգևորականների ձեռքում՝ կարող էր մեզ համար երկրորդ Վենեցիա դառնալ“:

Եւ իրաւ, վանքը եկամուտներ ունի, սակայն ամէն բան վատնվում է ապարդիւն կերպով, վանքն ունի հողեր և ցամաքի վրա,—սակայն ոչ կղզու վրա, ոչ էլ ցամաքի վրա ոչ մի դպրոց չէ պահում: Վանքում կարելի էր գիշերօթիկ դպրոց պահել, իսկ ցամաքի վրա, Ելենովկա գիւղից ոչ հեռու գտնվող վանքապատկան դեռնի վրա կարելի էր մի երթևեկ, կենտրոնական ուսումնարան հիմնել: Կենտրոնական ենք ասում, որովհետև այդ դպրոցում կարող էին ուսում առնել հեռաւոր շրջակայ գիւղերից եկող գնացող մանուկները. այդ գիւղերն են՝ Ելենովկա, Զիբուխլու, Ցամաքաբերդ, Գոմաճոր, Օրդագլու և այլն....

Ցիշեալ գիւղերի մի քանի ներկայացուցիչներն արդէն հաւաքել են մի որոշ գումար, որի չափը մեզ անյայտ է, և դիմելով Սևան վանքի միաբանութեան, խնդրել են զիջանել ուսումնարանի շինութեան համար Ելենովկա գիւղին կպած վերոյիշեալ վանքապատկան դեռնը: Սակայն մինչև օրս իրանց խնդիրքին պատասխան չեն ստանում:

Ելենովկա գիւղին հասնելուն պէս, մեզ շրջապատեցին շրջակայ գիւղերի ներկայացուցիչները, աղաչելով որ հասցնենք իրանց խնդիրքը Էջմիածնի սինոդին՝ թոյլ տալ վերոյիշեալ դեռնի վրա կենտրոնական-ծխական արական դպրոց հաստատելու: Իմացանք որ գիւղացիք արդէն ինքնաբերաբար խնդիրք էլ են ներկայացրել սինոդին նոյն առարկայի վրա, սակայն ոչքան իմացանք Էջմիածնում, նրանց գրաւոր խնդիրքը չէ յարգվել սինոդից այն պատճառով, որ գիւղացիք տգիտաբար անկանոն ընթացք տուեցին իրանց խնդիրքին: Սինոդը անկարող է ճանաչել մասնաւոր անձանց, անկարող է երաշխաւորել թէ մասնաւոր անձինք ինչ գործադրութիւն կանեն իրանց ձեռք բերած վանքապատկան հողից: Հարկաւոր էր որ գիւղական հասարակութիւնները ոչ թէ ուղղակի դիմէին Էջմիածնի սինոդին, այլ նախ պարզելով այն հարցը թէ ոչքան գումար են հանգանակած, դիմէին խնդիրքով թեմական տեսչին, իսկ այս վերջինը իր կողմից դիմէր նոյն խնդիրքով սինոդին: Դա է օրինական ճանապարհը:

Ի վերջոյ կասենք, որ բացի վերոյիշեալ երթևեկ դպրոցից, Սևան վանքի միաբանութիւնը շատ բան կարող էր անել, եթէ աւելի եռանդոտ լիներ: Եւ իրաւ, եթէ մեր հոգևորականութիւնը մտաւոր և բարոյական զարգացման աւելի բարձր մակերևոյթի վրա կանգնած լիներ, նա կարող էր Սևան ծովի կղզուց՝ մի նոր Վենեցիա դարձնել... Տեղը շատ յարմար է դրա համար:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՐԻՄԵԱՆ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆ

1860 թվին Խրիմեան Հայրիկ, երբ դեռ վարդապետ էր, եկաւ Էջմիածին և ճանապարհորդեց Անդրկովկասում: Նրա այդ ճանապարհորդութիւնը երկու նպատակ ունէր. առաջին՝ դրամական օժանդակութիւն հաւաքել ռուսահայերից Վարագի դպրոցի և տպարանի համար, և երկրորդ՝ ծանօթանալ ռուսահայերի մտաւոր վիճակի և կացութեան հետ:

Կովկաս գալով՝ Խրիմեան ամենից առաջ այցելեց Մայր Աթոռը, Մատթէոսի կաթողիկոսութեան ժամանակ, և մնաց Էջմիածին ընդամենը եօթ օր... Յաջորդ 1861 թվին վերադառնալով Վարագ, Հայրիկ նոյն թվի «Արծուի Վասպուրականի» մէջ տպագրեց մի գեղեցիկ յօդուած: Այդ յօդուածում նա մի քանի խօսքով պատմում է, թէ ինչ տպաւորութիւն թողեց իր վրա Էջմիածինը, և ապա մանրամասնօրէն կանգ է առնում այն կէտի վրա, թէ ինչ նշանակութիւն ունի Էջմիածինը հայերի համար, և ինչպէս կարող է նա ըստ արժանւոյն ծառայել իր կոչման:

Ներկայումս, երբ Համազգային ժողովի ընտրութեամբ «Խրիմեան և Էջմիածին» բառերը միմեանց հետ կապված են մի ներքին կապով, վերին աստիճանի հետաքրքրական է իմանալ թէ ինչ կարծիք է յայտնել Հայրիկ Էջմիածնի և հայոց կաթողիկոսութեան մասին: Ուստի ներկայ յօդուածում առաջ կը բերենք Հայրիկի յայտնած մտքերի մի քանի կէտերը, խոստանալով «Մշակի» յաջորդ համարներից մինում արտատպել «Արծուի Վասպուրականի» յիշեալ յօդուածը:

Խօսելով Էջմիածնի հայրապետական գահի մասին, Խրիմեան ասում է հետևեալը.

«Էջմիածնայ գահը ընդհանուր հայկազանց եկեղեցական մարմնոյն աչք ու ճրագն է. որչափ այս ճրագին նշոյլներ առատ և հարուստ լոյսեր ցոլացնեն իրենց շուրջը, այնչափ կը լուսաւորուի Հայաստանեայց եկեղեցւոյ տաճարը: Էջմիածին Լուսաւորչական եկեղեցւոյ կամարին արևն է. իր ճառագայթները Այրարատայ կենտրոնէն բաշխելով՝ պիտի տարածէ և լուսաւորէ ողջ հայոց տունը: Էջմիածինը բոլոր հայերուն համար սիրտ է. սրտի բոլոր արեան շրջաններու կենտրոնական տեղին է...»

Այդպիսի խօսքերով ձևակերպելով Էջմիածնի բարոյական ահագին նշանակութիւնը, Խրիմեան հարց է դնում, թէ ապա ինչ է պատճառ, որ «այդ սրտից արեան յորդ շրջանների ճանապարհը՝ փակվեր է», թէ՝ «ինչ թանձր վարագոյր է քաշված այդ կենտրոնական արևի ճառագայթների առաջ», և թէ՝ «ով է վերցուցեր հասարակաց լուսատու բարձր աշտանակի վրա դրած ճրագը և դրեր գրուանին տակը, որպէս զի տան զաւակներ ու մանկտիներ կարօտ մնան լուսոյն:»

Այդ արդեւոնթ պատճառները, Հայրիկի կարծիքով, շատ են, և դրանցից նա մատնանիշ է անում մի քանիսի վրա միայն:

Ապա խօսելով կաթողիկոսի դերի մասին, Խրիմեան ասում է, թէ սխալ է այն կարծիքը, որ իբրև թէ կաթողիկոսը միանակ, միմիայն իր հայրապետական գաւազանի իշխանութեամբ կարող է «աղդին պահանջած հիմնական կարգադրութիւնը Էջմիածնայ մէջ հաստատել», և պընդում է, որ Էջմիածնի կաթողիկոսը և առհասարակ Էջմիածինը միայն այն ժամանակ կարող է իրագործել իր առաջ դրած խնդիրները, եթէ կաթողիկոսի հետ միասին, միահամուռ ոյժերով գործէ ամբողջ միաբանութիւնը, և եթէ Էջմիածնի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եւ այսպէս, մայիսի 4-ի նախօրը վերջացաւ քառանուն ցանկի միաձայն հաւանութեամբ ընդունելովը: Մի բան մոռացայ յիշելու: Ընտրողների թիւը 65 էր, 72 ձայնի իրաւունքով, այն է 7 ընտրողներ ամեն մինը երկու ձայնի իրաւունք ունէին: Բայց 14 ընտրողներ ևս, չը կարողանալով անձամբ գալ, ուղարկել էին իրանց կարծիքը. և ապա այդ գրաւոր կարծիքները քառանուն ցանկը կազմելու ժամանակ ի նկատի պիտի առնվէին օրէնքով: Եւ առնվեցան: Ցայտնվեց, որ Խրիմեանի համար քուէ ուղարկել են 5 ընտրող, Իզմիրլեանի համար 1, Աշըգեան պատրիարքի համար 6, Վեհապետեան Ցարութիւն պատրիարքի համար 3, Խորէն Մխիթարեանի համար 2, Օրմանեանի համար 2, Շիշմանեանի համար 2, Սուրէնեանի համար 1: Ուստի ընտրութեան մասնակցող 86 ձայներից Խրիմեան ստացաւ 77 ձայն, Իզմիրլեան 73, Մխիթարեան 74, Երեմիա Տէր-Սահակեան 72, Աշըգեան 6 ձայն: Երրորդ, այսինքն վերջնական ընտրութեան օրը, միայն ներկայ եղող 72 ձայները պիտի ի հաշիւ առնվէին:

Գործի կէսը կատարված էր, բայց ամենադժուարինը և ծանրը դեռ մնում էր: Կայացած համաձայնութեան համեմատ Խրիմեան պիտի ընտրվէր միաձայն, Իզմիրլեանի մասին պիտի թողվեր իւրաքանչիւր ընտրողի ազատ կամքին և որովհետև յայտնի էր, որ 25 ընտրողներ Իզմիրլեանին ձայն չը պիտի տան, ուստի Իզմիրլեան պիտի ստանար 47 ձայն: Բայց մայիսի 4-ին, երեկոյեան դէմ չարագուշակ շշուկներ սկսեցին երևալ. յայտնվեց որ Թիֆլիսում հրատարակվող անանուն թերթի խմբագիրը իր խմբակով սկսել է պղտորել ընտրողների միտքը և ամեն ճիգ թափում է համոզել, որ Իզմիրլեան ևս միաձայն ընտրվի, և որովհետև այդ անկարելի էր, ի նկատի ունենալով, որ 25 ընտրողներ սև քուէ պիտի տային Իզմիրլեանին, ուստի իբրև սպառնալիք առաջարկել, որ Խրիմեանին չեն ընտրի միաձայն, այլ միայն 40 ձայն կը տան, որով Իզմիրլեան առաջին, իսկ Խրիմեան երկրորդ ընտրեալ պիտի հանդիսանան: Խրիմեանին և Իզմիրլեանին հաւասար քուէներով, այն է միաձայն ընտրելու առաջարկութիւնը արել էր Բրուսայի պատգամաւոր պ. Ա. Յովհաննիսեան դեռ մայիսի 1-ի աշխարհական պատգամաւորների ժողովի մէջ, բայց մերժվել էր: Եւ ահա մայիսի 4-ին, ընթրիքից յետոյ, Թիւրքիայի եկեղեցական պատգամաւորներից ոմանք միանալով Ռուսաստանի պատգամաւորների այն մասի հետ, որոնց համար Խրիմեան նոյնպէս դիմակ էր, ժողով են կազմում, որ վճռեն կամ Խրիմեանին և Իզմիրլեանին միաձայն ընտրել, կամ եթէ մենք չը համաձայնվենք, այն ժամանակ իրանք պէտք է Խրիմեանին նուաղ քուէ տան: Ի մեծ պատիւ և ի փառս Թիւրքիայի բոլոր աշխարհական և մի քանի եկեղեցական պատգամաւորների, պէտք է քաղցրութեամբ յիշենք, որ նրանք սաստիկ ընդդիմութիւն են ցոյց տալիս այդ տեսակ առաջարկութեան և բացարձակապէս յայտնում են, որ եթէ այդ տեսակ բան անեն, բոլոր 25 աշխարհական պատգամաւորները՝ համախոհ եկեղեցականների և Էջմիածնի միաբանութեան պատգամաւորների հետ պիտի թողնեն ժողովը և դուրս գան, «այն ժամանակ, գոռում է հանգուցեալ Գասպար էֆէնդի Ծերունին (Նիկոմիդիայի պատգամաւորը) սրբազան հարք, դուք ձեզ համար կաթողիկոս ընտրեցէք. ամբողջ ազգը ցանկանում է Խրիմեանին, պարտաւոր էք նրան միաձայն ընտրել»: Թէ այս բացարձակ յայտարարութիւնը, թէ զանազան կողմերից տեղացող հեռագիրները, նամակները, եկած պատգամաւորութիւնները, որոնք ամենքը պահանջում, խնդրում, պաղատում էին կատարել ազգի ցանկութիւնը՝ ընտրել Խրիմեանին միաձայն, համոզում են եկեղեցականներին. ուստի յայտնում են, որ պատրաստ են միաձայնութեամբ ընտրելու Խրիմեանին, միայն մի վերջին պայման ունեն, այն է որ Ռուսաստանի և Պարսկաստանի աշխարհական պատգամաւորներից 4-ը (Արծրունի, Առաքելեան, Աթաբէգեան, Մէլիք-Աղարեան) մանաւանդ առաջին երկուսը սպիտակ քուէ տան Իզմիրլեանին: Մի պատգամաւորութիւն եկաւ մեզ յայտնելու այդ պայմանը: Պ.պ. Աթաբէգեան և Մէլիք-Աղարեան յայտնեցին, որ իրանք հակառակ չեն, պատրաստ են իրանց քուէն տալ Իզմիրլեանին, բայց Արծրունի և Առաքելեան բացարձակապէս մերժեցին այն բանաւոր պատճառներով, որ իրանք զոհած լինելով իրանց ընտրելիներին, խոնարհվելով միայն մեծամասնութեան առաջ, իրանց ընտրելիներից միայն Խրիմեան մնացած լինելով, հակառակ վարված կը լինէին իրանց ուղղութեան, համոզմունքին և profession de foi-ին, եթէ այժմ բացի Խրիմեանից ուրիշէն ևս քուէ տային:

Վերջապէս լուսացաւ մայիսի 5-ի օրը: Դեռ շատ վաղ, ժողովուրդը սկսեց հաւաքվել. ամենքը լարված, յուզված դրութեան մէջ էին նախորդ օրվայ լուրերի պատճառով. եղան ցոյցեր պատգամաւորների սենեակների առաջ. օդի մէջ տիրում էր մի տեսակ էլեկտրականութիւն, որ յուզում էր ամենքին: Բոլոր պատգամաւորները յուզված են, վերջին անգամ Օրմանեան և այլք գալիս են համոզելու և պահանջելու, որ Արծրունի և Առաքելեան, անպատճառ սպիտակ քուէ տան Իզմիրլեանին. վերջին անգամ սպառնալիք է լինում, բայց նրանք մնում են անդրդվելի: Ժամը 8½-ին զանգակները կոչում են պատգամաւորներին վեհարան. ժողովրդի մէջ սկսվում է ցրվել Խրիմեանի մասին, Առաքելեանի նախորդ օրվայ արտասանած ճառի տպած օրինակները. «Կեցցէ Հայրիկ» աղաղակները թնդացնում են օդը: Վեհարանում վէճ է սկսվում պատգամաւորների մէջ. Ստեփան եպիսկոպոս և Գասպար էֆէնդի բարձրաձայն գոռում են, որ թոյլ չեն տայ ոչ ոքի խարդախութիւն անել, որ եթէ Հայրիկ չընտրվի առաջին կանդիդատ և միաձայն, մեծ չփոթութիւն պիտի ծագի ազգի մէջ, որ իրանք եկեղեցականները ազգի ծառաները լինելով պարտաւոր են ազգի կամքը կատարել. այդ ազգը, առանց բացառութեան, Խրիմեանին կը ցանկայ ընտրված տեսնել: Դուրսը ժողովրդի յուզմունքը իր վերջին ծայրին է հասնում: Ահա այդ ժամանակ արեգակի նման պարզվեց, որ Աշըգեանի և Իզմիրլեանի հետ Խրիմեանին առա-

գահակալին լծակից լինեն թէ թեմական առաջնորդները և թէ նոյն իսկ ժողովուրդը:

Սակայն միաբանութիւնը, ասում է Հայրիկ, ենթարկված է մի տեսակ անշարժութեան և անգործունէութեան. նա չէ նուիրված եկեղեցական խնդիրներին և մտաւոր գործունէութեան, և նրան զբաղեցնողը հոգևոր հարցերը չեն, այլ այդ միաբանութիւնը, հակառակ իր հոգևոր կոչման, անձնատուր է եղած մնտեսական խնդիրներին, դրամական գործերին, որոնք ոչինչ կապ չունեն և չը պէտք է ունենան հոգևորականի գործունէութեան հետ:

«Մեր դիտած յայտնի պատճառը,—ասում է Հայրիկ,—Էջմիածնայ յառաջադիմութեան ոտքին արգելիչ մեծ քարը՝ մնտեսական կառավարութեանը ամենածանր զբաղմունքն է, թէ պարսպին մէջ եղածը և թէ արտաքին մշակական գործքերուն. որուն ծանրութիւնը Արծիւն էլ անձամբ կը զգայ Վարագայ վանքին մէջը. ահ, և իր աղտ թեերը ճնշուեր է բոլորովին: Ահա այս է աւելի բուն պատճառը որ Այրարատայ հռչակաւոր Աթոռը և ուրիշ հայոց երեսելի վանքերը Վենետիկի և Վիէննայի գրական արդիւնքները չունին... Միթէ մի և նոյն պաշտօնական զբաղմունք չէ՞, որ ս. Երուսաղէմայ քառասունի չափ վարդապետաց միտքը և գրիչը կաշկանդեր է, որք հազիւ կարող են արեան քրտինք թափելով, տնօրինական սրբազան տեղեաց ծառայել և այնչափ ուխտաւորաց պատասխանը տալ»:

Ամբողջ ծանրութիւնը, ամբողջ լուծը դնել կաթողիկոսի վրին, որ նա մեն-մենակ կրի այդ ամբողջ ծանրութիւնը և առաջ մղի եկեղեցու և ազգի հոգևոր պէտքերի գործը, Խրիմեանի կարծիքով, և անարդարութիւն է և անպատակայարմար: Նա պահանջում է, ինչպէս վերևն էլ ասեցինք, որ ամենից առաջ Էջմիածնի վանքի մէջ ապրող միաբանութիւնը իր մտքերով և ձգտումներով հետևող և համերաշխ լինի կաթողիկոսի հետ, որպէս զի կաթողիկոսը իրան մենակ, առանձնացած չը զգայ վանքի մէջ, ինչպէս այդ պատահեց օրինակ Ներսէս կաթողիկոսի ժամանակ, որը յաճախ գանգատվում էր ասելով. «ճնճղուկի նման միայն մնացել եմ Էջմիածնայ տանիքի վրայ»:

Առաջ գալով այդ հայեցակէտից, Հայրիկն ասում է.

«Էջմիածնայ հայրապետական լուծին միւս ծայրը յիրաւի արժան է որ միաբանութեան հոգին՝ իր վզին վրայ ընդունի սիրով, և այնպէս պէտք է ընթանայ հայրապետական ոտքին հետը, որ ոչ յառաջ և ոչ ետ մնայ: Այդ հերիք չէ. հապա պէտք է այդ առաջին ամոլ լուծին հետը երկրորդական և երրորդական լուծերը: Ով պիտի քաշէ այդ լուծերը.—վիճակաւոր առաջնորդները. թէպէտև և սոքա ունեն իւրեանց վզին վրայ վիճակներու սեպհական լուծը, բայց միաբանութեան հոգւոյն օրէնք կը հարկադրէ, որ իրենք նոյն հայրապետական ամոլ լուծին առաջ լծուելով՝ ոյժ տան, որով աւելի կը դիւրանայ արօրին ընթացքը.... Այլ սրտի ցաւով կը խօսիմ, միթէ վիճակաւոր առաջնորդները միայն եպիսկոպոս լինելու համար Էջմիածին պիտի երթան....»:

Այդ պայմանը դնելով, Հայրիկ պնդում է այդ կէտի վրա, որ թեմական առաջնորդները պէտք է երբեմն երբեմն այցելեն Էջմիածինը, և ոչ թէ տասն-տասնհինգ տարով նստելով իրանց թեմերում, բոլորովին կտրված մնան Էջմիածնից, և Էջմիածին գնալով, պէտք է ընդհանուր խորհրդակցութեամբ, ընդհանուր ոյժերով մշակեն այն հարցերը, որոնց վճռելը այսպէս թէ այնպէս նշանակութիւն ունի ժողովրդի համար:

Իսկ եկեղեցու մնտեսական գործերի մէջ՝ Հայրիկ անհրաժեշտ է համարում նոյն իսկ ժողովրդի մասնակցութիւնը և աջակցութիւնը, և հրաւէր է կարդում ժողովրդի ներկայացուցիչներին, չը խորշել Էջմիածնից, այլ ազատ գնալ այնտեղ, որի մուտքը ամենքի համար բաց պիտի լինի, և ընդհանուր խորհրդակցութեամբ առաջ տանել գործը:

Եւ ահա, այսպիսով, մի կողմից կաթողիկոսի և միաբանութեան, և միւս կողմից հոգևորականութեան և ժողովրդի միաբան, համերաշխ գործունէութեան մէջ է տեսնում Խրիմեան Հայրիկ Էջմիածնի ոյժը և ժողովրդի մտաւոր գործի առաջադիմութիւնը: Բաժան-բաժան գործունէութիւնը և անհամերաշխութիւնը նա համարում է անաջողութեան աղբիւր և սկիզբն անգործունէութեան:

Խրիմեան իր խօսքը վերջացնում է ասելով. «Եթէ կը սիրէք ազգային յառաջադիմութիւնը, յառաջ մտիք և լծուեցէք եկեղեցական և աշխարհական ի միասին. կը տեսնաք ձեր աչքով և փորձով, թէ ինչպէս խոր կը վարէ և յառաջ կերթայ Հայրապետին սրբազան արօրը»:

Խ. Մ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Մայիսի 12-ին

Տիրում է անասելի դրամական յուսահատութիւն: Բագուցիների համար այդպիսի անաջող հանգամանքներ շատ քիչ են պատահել: Ո՞վ կարող էր երևակայել, որ հում նաւթը 1889—90 թուերին պուդը 7 կոպէկ գնից պէտք է այսօր իջնի $^3/_4$ կոպէկի:

Անսպառելի ֆոնտանները յաջորդելով միմեանց, պահեստի բոլոր ամանները լցնելուց յետոյ, այժմ նաւթատէրերը մնացել են շուարված, թէ ինչ անեն իրանց նաւթերի հետ:

Մի կողմից աչքի առաջ ունենալով այն ակնյայտնի վնասը, որ նաւթատէրերին իրանց ամեն մի պուդ նաւթ արդիւնաբերելու համար ծախս է լինում առնուազը նոյն $^3/_4$ կոպէկ եթէ ոչ աւելի, միւս կողմից, որը կերօսինի գինը ընկած լինելով պուդը 3 կոպէկի, որ պատճառ է դառել գործարանների դադարեցնելուն, հետևապէս և հում նաւթի պահանջը պակասելուն, նաւթատէրերին ուրիշ բան չէ մնում, եթէ ոչ արդիւնաբերութիւնը դադարեցնել:

Բայց որքան բարդ դժուարութիւններ են կապված այդ գործերը դադարեցնելու հետ: Նախ՝ կան հորեր, որ դադարեցնելով փչանում և ջնջվում են: Կան մարդիկ, որ հորերի համար հողերը ուրիշներից կապալով վերցրած լինելով, և մի երրորդական տասանորդ տալ կապակցված լինելով, հնար չունեն իրանց պայմանի զօրութեամբ արդիւնաբերութիւնը դադարեցնելու: Բացի այդ և սրանց նման շատ դժուարութիւններից, կայ և մի ծանրակշիռ հարց: Մեր նաւթարդիւնաբերութեամբ պարապողները առհասարակ ամենքը շատ փոքր են պարտքով վերցրել միմեանցից, և ահա այսօր ամեն մէկը ստիպված է մեծ մեծ տոկոսներ տալ (մինչև 20%) և հարիւր հազար ռուբլի արժողութեամբ կապիտալները ապարդիւն և անգործ դցած թողնել, մի ծանր հանգամանք, որ ամենին նեղութեան մէջ է դցել:

Ժողովրդական առածը, թէ՝ «Ալիի գդակը Վալիի գլխին են դնում, Վալիի գդակը՝ Ալիի», տեղի է ունենում ամեն օր: Եթէ այդ տեսակ ճգնաժամը շարունակվի մօտ 10 ամիս կամ աւելի, և ապա մի շարք մնանկութիւններ անխուսափելի կը լինեն: Առ այժմ տեղի են ունեցել 4—5 սընանկութիւններ, բայց դրանք գլխաւորապէս օտարներից են. հայերը դեռ միմեանց պահպանում են, այն յուսով, որ այդ ճգնաժամը կը տևի ոչ աւել քան 6 ամիս:

Գործերի այդ անմխիթար դրութեան պատճառով, ամենաականաւոր ընկերութիւններ և վաճառականական տներ իրանց ծառայողների ռոճիկները 25 տոկոս պակասեցրել են: Կան և այնպիսիները, որոնք 450 ռուբլի ամսական ռոճիկը այժմ իջեցրել են 250 ռուբլի: Աւելորդ է ասել, որ բազմաթիւ մշակներ մնացել են անգործ, մեքենագործարանները գործ չունեն, ընդհանուր տագնապը իր ազդեցութիւնն է ունեցել և մանր արհեստաւորների, վարձով տների, մանր վաճառականութեան և ամեն մի ձեռնարկութեան վրա: Ընդհանուր գանգատ է, թէ փող չը կայ: Ամենքը ըսպասում են կերօսինի և հում նաւթի գների բարձրանալուն. բայց նշույլներն այնքան քիչ են, որ ամենքը համաձայն կը լինեն, եթէ ոչ 6 ամսից, գոնէ 10 ամսից յետոյ Բագուն կենդանութիւն առնէր: Եթէ ընդունենք, որ նաւթարդիւնաբերողների փրկութիւնը սինդիկատը պէտք է լինէր, չենք կարող մխիթարվել, որովհետև արդէն կազմված սինդիկատում մտնակցում են միմիայն չորս նշանաւոր ֆիրմաներ, այն է պ.պ. Բուդաղեան, Ադամեան, Թաղիեվ և Լիանոզեան. սրանցից ամեն մէկը մէկը մօտ միլիոն ու կէսի վարկ ունեն. միւս գործարանատէրերը դեռ տատանում են և սպասում են մնանայի:

Ալ. Աբ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բաթում, մայիսի 18-ին

Թոյլ տուք մեզ, կը խնդրենք, ձեր յարգելի թերթին միջոցաւ, մեր և մեր արդոյ պաշտօնակից պատգամաւորաց—որոնք, հաւատի եմք, սիրով պիտի միանան մեզ յայտ պարագայի—ջերմ շնորհակալիքը մատուցանել Թիֆլիսի ազնիւ և պատուական հայ հասարակութեան՝ նոցա մեզ արած սիրալիր ընդունելութեան համար:

Թոյլ տուք, որ անկեղծօրէն յայտարարենք, թէ որչափ զգածված եմք նոցա մեր նկատմամբ արտայայտած այնչափ սիրոյ զգացմանց համար, որով կարծես ամեն ոք կուզէր գերազանցել միւսը, զմեզ այնչափ սիրալիր կերպիւ պատուասիրելով: Եթէ այս մեր ուղևորութեան մէջ ունեցանք վայրկեաններ, երբ սեղական դժուարութիւններէ նեղեալ վհատութեան տեղի կը տայինք, կը խոստովանինք, որ Թիֆլիսի մեր սիրելի հայրենակցաց կողմանէ մեր դատ սրտաբուղխ հիւրընկալութիւնը կատարելապէս բաւական էր մեր կրած նեղութիւնները մոռացնելու:

Եթէ Թիֆլիսի և Կովկասի առհասարակ հայ հասարակութիւնն կը հաւատայ, որ կաթողիկոսական ընտրութեան առթիւ փոքր ինչ աշխատած լինիմք մեր արդոյ ընկերաց, մեր համայն պատգամաւոր եղբարց հետ կատարեալ համերաշխութեամբ գործելու,—որպէս զի այն սիրեցեալ անձնաւորութեան ընտրութիւնն ևս կատարեալ լինի առանց որ և է կուսակցութեան—եթէ կը հաւատան, կըսեմք, որ մեր այս փանաքի ծառայութեամբ նոցա համակրութեան վրա փոքր ինչ իրաւունք ստացած եմք, կը յայտարարեմք բացարձակապէս թէ այս իրաւունքը կը տարածի միանգամայն Ցաճկաստանի, Ռուսիոյ, Պարսկաստանի և այլն համայն պատգամաւորաց վրա, որոց իւրաքանչիւրն իւր շրջանին մէջ գործեց մի և նոյն նպատակի համար:

Այժմ կը մեկնիմք, և կը հեռանամք ձեր գեղեցիկ երկրէն, քաղցր յիշատակներ տանելով մեզ հետ, և կըսեմք թէ մի մոռանաք զմեզ, և սիրեցէք զմեզ, ինչպէս մեք ևս չը պիտի մոռանամք, և չը պիտի դադրիմք սիրելու զձեզ:

Գար. Յովհ. Բաբաղեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, մայիսի 20-ին

«Արձագանք» լրագրի № 58-ի մէջ մի լուր է տպված սրբազան տեղակալ Երեմիա եպիսկոպոսին տուած ուղերձի մասին, որի մի անվաւեր օրինակը «Տարազ» շաբաթաթերթը շտապել է տպելու իր № 18-ի մէջ: Հարկ եմ համարում յայտնել ի դիտութիւն հասարակութեան, որ սրբազան Երեմիա եպիսկոպոսին, իբրև համազգային ընտրողական ժողովի նախագահին, մայիսի 6-ին, առաւօտեան ժամը 8-ին, մատուցվեց 18 աշխարհական պատգամաւորներից ստորագրված մի ուղերձ, որի ճիշդ օրինակը դեռ Երևանից ուղարկել եմ «Մշակ» լրագրին «Կաթողիկոսական ընտրութիւն. ժողովուրդը ապշած մնացած է այն աքանչելի տեսարանի առաջ, որ երևում է երկնքի վրա. իր զենիթին հասած արեգակի շուրջը բոլորվել է մի ծիածանման բակ, ճիշդ ս. տաճարի գմբէթի գլխին, ծիածանի բոլոր գոյներով, որը կամաց-կամաց իջնելով, անհետանում է վեհարանի ետևը. ծերերը յիշում են, որ այդպիսի մի աքանչելի երկնային երևոյթ տեղի ունեցաւ և Ներսէս Աշտարակեցու Թիֆլիս մտնելու ժամանակ, 43 թուին: Այդ երևոյթից կաշկանդված զգացումները նորից հոսում են և դղրդիւնը շարունակվում է:

Ժամը 1-ին և 30 րոպէ ատենադպիրը կարդում է արձանագրութիւնը և ամենքը ստորագրելուց յետոյ, ժամը 2-ին նորից տաճարը թնդում է «Էջ Միածին ի Հօրէ» շարականով և նախագահ սրբազանը յայտնում է ժողովը փակված:

Հաղիւ տաճարի դռները բացվում են, որ որոտալից աղաղակներ, անասելի ոգևորութեան, ցնծութեան, հրճուանքի, ծափահարութիւնների ցոյցեր դղրդում են վանքը և շրջակայքը: «Կեցցէ համազգային ժողով», «կեցցէ Խրիմեան Հայրիկ», ահա այն ձայները, որոնք լսվում էին սարսափելի ժխորի մէջ. շատերն ուրախութիւնից լացում են, հաճրուրում են միմեանց: Պատգամաւորներին արած օվացիաներին վերջ չը կայ. հաղիւ կարողանում ենք մի կերպով սպրդել մեր սենեակները քիչ հանդստանալու մինչև ճաշը:

Վերևում մոռացայ յիշելու, որ այդ օր, պ. պրօկուրօրը ժողովի մէջ կարդաց մայիսի 4-ի գործողութեան արձանագրութեան հայերէն և ռուսերէն, որ դադարեցնելով փչանում և ջնջվում են: Կան մարդիկ, որ հորերի համար հողերը ուրիշներից կապալով վերցրած լինելով, և մի երրորդական տասանորդ տալ կապակցված լինելով, հնար չունեն իրանց պայմանի զօրութեամբ արդիւնաբերութիւնը դադարեցնելու: Բացի այդ և սրանց նման շատ դժուարութիւններից, կայ և մի ծանրակշիռ հարց: Մեր նաւթարդիւնաբերութեամբ պարապողները առհասարակ ամենքը շատ փոքր են պարտքով վերցրել միմեանցից, և ահա այսօր ամեն մէկը ստիպված է մեծ մեծ տոկոսներ տալ (մինչև 20%) և հարիւր հազար ռուբլի արժողութեամբ կապիտալները ապարդիւն և անգործ դցած թողնել, մի ծանր հանգամանք, որ ամենին նեղութեան մէջ է դցել:

Ժողովրդական առածը, թէ՝ «Ալիի գդակը Վալիի գլխին են դնում, Վալիի գդակը՝ Ալիի», տեղի է ունենում ամեն օր: Եթէ այդ տեսակ ճգնաժամը շարունակվի մօտ 10 ամիս կամ աւելի, և ապա մի շարք մնանկութիւններ անխուսափելի կը լինեն: Առ այժմ տեղի են ունեցել 4—5 սընանկութիւններ, բայց դրանք գլխաւորապէս օտարներից են. հայերը դեռ միմեանց պահպանում են, այն յուսով, որ այդ ճգնաժամը կը տևի ոչ աւել քան 6 ամիս:

Գործերի այդ անմխիթար դրութեան պատճառով, ամենաականաւոր ընկերութիւններ և վաճառականական տներ իրանց ծառայողների ռոճիկները 25 տոկոս պակասեցրել են: Կան և այնպիսիները, որոնք 450 ռուբլի ամսական ռոճիկը այժմ իջեցրել են 250 ռուբլի: Աւելորդ է ասել, որ բազմաթիւ մշակներ մնացել են անգործ, մեքենագործարանները գործ չունեն, ընդհանուր տագնապը իր ազդեցութիւնն է ունեցել և մանր արհեստաւորների, վարձով տների, մանր վաճառականութեան և ամեն մի ձեռնարկութեան վրա: Ընդհանուր գանգատ է, թէ փող չը կայ: Ամենքը ըսպասում են կերօսինի և հում նաւթի գների բարձրանալուն. բայց նշույլներն այնքան քիչ են, որ ամենքը համաձայն կը լինեն, եթէ ոչ 6 ամսից, գոնէ 10 ամսից յետոյ Բագուն կենդանութիւն առնէր: Եթէ ընդունենք, որ նաւթարդիւնաբերողների փրկութիւնը սինդիկատը պէտք է լինէր, չենք կարող մխիթարվել, որովհետև արդէն կազմված սինդիկատում մտնակցում են միմիայն չորս նշանաւոր ֆիրմաներ, այն է պ.պ. Բուդաղեան, Ադամեան, Թաղիեվ և Լիանոզեան. սրանցից ամեն մէկը մէկը մօտ միլիոն ու կէսի վարկ ունեն. միւս գործարանատէրերը դեռ տատանում են և սպասում են մնանայի:

Ալ. Աբ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բաթում, մայիսի 18-ին

Թոյլ տուք մեզ, կը խնդրենք, ձեր յարգելի թերթին միջոցաւ, մեր և մեր արդոյ պաշտօնակից պատգամաւորաց—որոնք, հաւատի եմք, սիրով պիտի միանան մեզ յայտ պարագայի—ջերմ շնորհակալիքը մատուցանել Թիֆլիսի ազնիւ և պատուական հայ հասարակութեան՝ նոցա մեզ արած սիրալիր ընդունելութեան համար:

Թոյլ տուք, որ անկեղծօրէն յայտարարենք, թէ որչափ զգածված եմք նոցա մեր նկատմամբ արտայայտած այնչափ սիրոյ զգացմանց համար, որով կարծես ամեն ոք կուզէր գերազանցել միւսը, զմեզ այնչափ սիրալիր կերպիւ պատուասիրելով: Եթէ այս մեր ուղևորութեան մէջ ունեցանք վայրկեաններ, երբ սեղական դժուարութիւններէ նեղեալ վհատութեան տեղի կը տայինք, կը խոստովանինք, որ Թիֆլիսի մեր սիրելի հայրենակցաց կողմանէ մեր դատ սրտաբուղխ հիւրընկալութիւնը կատարելապէս բաւական էր մեր կրած նեղութիւնները մոռացնելու:

Եթէ Թիֆլիսի և Կովկասի առհասարակ հայ հասարակութիւնն կը հաւատայ, որ կաթողիկոսական ընտրութեան առթիւ փոքր ինչ աշխատած լինիմք մեր արդոյ ընկերաց, մեր համայն պատգամաւոր եղբարց հետ կատարեալ համերաշխութեամբ գործելու,—որպէս զի այն սիրեցեալ անձնաւորութեան ընտրութիւնն ևս կատարեալ լինի առանց որ և է կուսակցութեան—եթէ կը հաւատան, կըսեմք, որ մեր այս փանաքի ծառայութեամբ նոցա համակրութեան վրա փոքր ինչ իրաւունք ստացած եմք, կը յայտարարեմք բացարձակապէս թէ այս իրաւունքը կը տարածի միանգամայն Ցաճկաստանի, Ռուսիոյ, Պարսկաստանի և այլն համայն պատգամաւորաց վրա, որոց իւրաքանչիւրն իւր շրջանին մէջ գործեց մի և նոյն նպատակի համար:

Այժմ կը մեկնիմք, և կը հեռանամք ձեր գեղեցիկ երկրէն, քաղցր յիշատակներ տանելով մեզ հետ, և կըսեմք թէ մի մոռանաք զմեզ, և սիրեցէք զմեզ, ինչպէս մեք ևս չը պիտի մոռանամք, և չը պիտի դադրիմք սիրելու զձեզ:

Գար. Յովհ. Բաբաղեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, մայիսի 20-ին

«Արձագանք» լրագրի № 58-ի մէջ մի լուր է տպված սրբազան տեղակալ Երեմիա եպիսկոպոսին տուած ուղերձի մասին, որի մի անվաւեր օրինակը «Տարազ» շաբաթաթերթը շտապել է տպելու իր № 18-ի մէջ: Հարկ եմ համարում յայտնել ի դիտութիւն հասարակութեան, որ սրբազան Երեմիա եպիսկոպոսին, իբրև համազգային ընտրողական ժողովի նախագահին, մայիսի 6-ին, առաւօտեան ժամը 8-ին, մատուցվեց 18 աշխարհական պատգամաւորներից ստորագրված մի ուղերձ, որի ճիշդ օրինակը դեռ Երևանից ուղարկել եմ «Մշակ» լրագրին «Կաթողիկոսական ընտ-

ջարկողները անկեղծ չեն, այլ դիմակաւորված Խրիմեանի անունով, այլապէս, հարկ չը կար այդքան խռովութիւն յարուցանել և պահանջել, որ Իզմիրլեան ևս միաձայն և հաւասար քուէ տուանայ:

Վերջապէս Ցեղապահ սրբազանի ձայնը լռեցնում է ամենքին: Հանդիսաւոր գնացքը սկսվում է. խռնված ժողովուրդը տեղի է տալիս պատգամաւորների առաջ աղմկալի ցոյցերով, «կեցցէ Հայրիկ» աղաղակներով, որոնք չեն դադարում, երբ տաճարի դռները փակվում են: Աղօթքից յետոյ, նախագահը ժամը $9^1/_4$-ին նիստը բացված է յայտարարում: Սահակ եպիսկոպոս խօսք է խնդրում և հետևեալ առենաբանութիւնն է անում. «Երէկվայ ժողովով ցանկացանք, որ ազգի ձայնով վճռենք ազգի և եկեղեցու բախտը. այսօրվայ ժողովով պիտի կատարենք այդ գործողութիւնը, որը մեր անձի հետ միասին պատմութեան սեփականութիւն պիտի դառնայ, բայց մենք նոր պատմութիւն ստեղծել չենք կարող, փորձը պիտի առաջնորդէ մեզ: Մեր եկեղեցին կանգուն է մնացել, պիտի մնայ յաւիտեան և դժոխքի դրռները չը պիտի կարողանան յաղթահարել նրան. մենք ունեցել ենք լաւ հայրապետներ, բայց ունեցել ենք և այնպիսիներ, որոնց պատմութիւնը ևս էջերով կը նկարագրէ. նաև գիտենք, որ եղել են արժանաւոր կաթողիկոսներ, որոնք սակայն քարկոծվել են ժողովրդից, ուստի կատարենք մեր պարտաւորութիւնն առանց աղդեցութեան ենթարկվելու: Ցարակոյս չը կայ, որ միայն Հոգին Սուրբ պիտի ներշնչէ մեզ հայրապետ ընտրելու մի այնպիսի անձն, որ արժանաւոր յաջորդ լինի Ս. Գրիգորի և Սահակի. դրա համար դուք, աշխարհական ընտրողներդ, երդվեցիք»:

Ապա տաճարի մուտքի կամարները թնդում են «Էջ Միածին ի Հօրէ» հոգեվայել շարականով, որ երգում են բոլորը յոտնկայս և երկիւղածութեամբ:

Պրօկուրօրը յայտնում է, որ օրէնքի 25-րդ յօդ. համաձայն այսօր պիտի կատարվի երկու կաթողիկոսացուների ընտրութիւնը և ամեն մի ընտրելու թեկնածու առանձին պիտի առաջարկվի և իւրաքանչիւր ընտրող բարձր ձայնով պիտի արտասանէ «ընտրեմ» կամ «ոչ ընտրեմ» բառը և արտասանելուց յետոյ գրէ այդ բառը և ստորագրէ:

Ժողովականների մի երկուսի կողմից փորձեր են լինում համոզելու պրօկուրօրին ամենից առաջ Երեմիա արքեպիսկոպոսի թեկնածուն կամ Իզմիրլեանի թեկնածու: Պրօկուրօրը յայտնում է, որ օրէնքի համեմատ պիտի առաջարկվի առաջինն, այն է ամենից շատ ձայն ստացողի թեկնածուն և առաջարկում է Մկրտիչ Խրիմեան արքեպիսկոպոսի թեկնածուն:

Հ. Առաքելեան ոտքի կանգնելով առաջարկում է, որ ինչպէս ժողովը նախորդ օրը միաձայն ընդունեց Խրիմեանին քառանուն ցանկի մէջ մտցնելը, այսօր ևս միաձայն և ոտքի կանգնելով ընտրէ նրան:

Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան բարկացած պատասխանում է. «կընդունենք, եթէ դուք ալ ընդունիք զԻզմիրլեան սրբազան ևս միաձայն ընտրելու:» Ժողովը մերժում է այս առաջարկութիւնը:

Սկսվում է Խրիմեանի քուէարկութիւնը ժամը 10-ին կրտսերագոյն պատգամաւոր Ենգիբարեանից. տաճարի կամարների տակ 72 անդամ թընդում է «ընտրեմ» բառը. ոչ մի բերան չէ զորում և չէ արտասանում «ոչ ընտրեմ» բառը. վերջանում է ժամը $10^3/_4$-ին:

Ժամը 11-ին առաջարկվում է Իզմիրլեանի թեկնածը. 50 ձայն լսվում է «ընտրեմ», 22 ձայն «ոչ ընտրեմ»: Երբ Շահրիկեան և Հ. Առաքելեան արտասանում են «ոչ ընտրեմ», Դիմաքսեան սրբազան հարցնում է. «Առաքելեան ասա «ոչ ընտրեմ», Շահրիկեան ասա «ոչ ընտրեմ»—«Այո, սրբազան, Առաքելեան, Շահրիկեան ասա «ոչ ընտրեմ,» լինում է պատասխանը:

Վերջանում է ժամը $11^1/_2$-ին:

Դրսի ժողովրդի ցոյցերը, աղմուկը շարունակվում են: Ժամը 12 և 10 ր. սկսվում է Խորէն եպիսկոպոսի քուէարկութիւնը և վերջանում է $12^1/_2$-ին. 16 «ընտրեմ», 56 «ոչ ընտրեմ» ձայներով:

Ժամը $12^1/_2$-ին սկսվում է Երեմիա արքեպիսկոպոսի քուէարկութիւնը և վերջանում է ժամը 1 և 10 ր., 19 «ընտրեմ» և 53 «ոչ ընտրեմ» ձայներով:

Ժամը 1 և 25 րոպէին սրբազան նախագահի զօրեղ ձայնը հուչակում է, որ Տէր Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան միաձայն, 72 ձայնով, և Տէր Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան 50 ձայնով ընտրված են կանդիդատներ յաստիճան կաթողիկոսութեան ամենայն հայոց: Անմիջապէս տաճարի փոքր զանգակը մեղմ հնչիւնով աւետում է այս լուրը ժողովրդին և ամբողջ Էջմիածինը դղրդում է որոտընդոստ աղաղակներով «Հայրիկ ընտրված է», «կեցցէ Հայրիկ» և յանկարծ տիրում է խորին լռութիւն. ժողովուրդը ապշած մնացած է այն աքանչելի տեսարանի առաջ, որ երևում է երկնքի վրա. իր զենիթին հասած արեգակի շուրջը բոլորվել է մի ծիածանման բակ, ճիշդ ս. տաճարի գմբէթի գլխին, ծիածանի բոլոր գոյներով, որը կամաց-կամաց իջնելով, անհետանում է վեհարանի ետևը. ծերերը յիշում են, որ այդպիսի մի աքանչելի երկնային երևոյթ տեղի ունեցաւ և Ներսէս Աշտարակեցու Թիֆլիս մտնելու ժամանակ, 43 թուին: Այդ երևոյթից կաշկանդված զգացումները նորից հոսում են և դղրդիւնը շարունակվում է:

Ժամը 1-ին և 30 րոպէ ատենադպիրը կարդում է արձանագրութիւնը և ամենքը ստորագրելուց յետոյ, ժամը 2-ին նորից տաճարը թնդում է «Էջ Միածին ի Հօրէ» շարականով և նախագահ սրբազանը յայտնում է ժողովը փակված:

Հաղիւ տաճարի դռները բացվում են, որ որոտալից աղաղակներ, անասելի ոգևորութեան, ցնծութեան, հրճուանքի, ծափահարութիւնների ցոյցեր դղրդում են վանքը և շրջակայքը: «Կեցցէ համազգային ժողով», «կեցցէ Խրիմեան Հայրիկ», ահա այն ձայները, որոնք լսվում էին սարսափելի ժխորի մէջ. շատերն ուրախութիւնից լացում են, հաճրուրում են միմեանց: Պատգամաւորներին արած օվացիաներին վերջ չը կայ. հաղիւ կարողանում ենք մի կերպով սպրդել մեր սենեակները քիչ հանդստանալու մինչև ճաշը:

Վերևում մոռացայ յիշելու, որ այդ օր, պ. պրօկուրօրը ժողովի մէջ կարդաց մայիսի 4-ի գործողութեան արձանագրութեան հայերէն և ռու-

բութեան պատմութեան» հետ և որի տպելն եթէ ուշացաւ, պատճառն այն էր, որ անցեալ շաբաթ, Համբարձման ծոնի պատճառով, «Մշակի» համարը դուրս չը գալով, հերթը դեռ այդ ուղերձին չը հասաւ։ Նա կը տպվի յաջորդ համարում ստորագրողների անուններով։ Անշուշտ նա կը տպվի և «Արարատ» ամսագրում։

«Տարազի» մէջ տպվածը ուղերձի սկզբնական խմբագրութիւնն է, որը, երբ պատգամաւորները հաւաքվեցին կարդալու և ստորագրելու, ինչ ինչ նկատումներով, մի քանի փոփոխութեան և կրճատումի ենթարկվեց։ Այդ վերջնական խմբագրութիւնը արտագրվելով ստորագրվեց 18 պատգամաւորներից. մնացած 7-ը, բացի Ա. Յովհաննիսեանից, յայտնել էին, որ երբ Տիգրան Էֆէնդի Կիւմիւշկէրտեանը ստորագրէ՝ թող թերթն ուղարկվի իրանց ևս ստորագրելու, բայց երբ պ. Կիւմիւշկերտեան ստորագրելուց յետոյ՝ ուղարկվեց, յայտնվեց, որ նրանք գնացել էին վանքերը այցելելու։ Պ. Ա. Յովհաննիսեան այդ ուղերձի տալու խնդրի մէջ չը կամեցաւ որ և է մասնակցութիւն ունենալ։

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մէջէդից «Кавказъ» լրագրին հեռագրում են մայիսի 14-ից. «Զորրորդ օրն է որ այստեղ խոլերան մեծ կոտորածներ է անում. մեռնողների թիւը մեծ է. եւրոպացիները, բացի երկու ռուս բժիշկներից, դուրս գնացին քաղաքից։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Մայիսի 15-ին Նուխի քաղաքից 8 կամ 7 վերստ հեռաւորութեամբ, պօստի ճանապարհի վրա, մօտակայ փոքր անտառից մի խումբ աւազակներ յանկարծ հրացաններով յարձակվում են 3 ֆուրգօնի վրա, վիրաւորում են երկու ֆուրգոն-պահողներին և երկու ճանապարհորդներին։ Աւազակները իսկոյն անհետանում են, ոչինչ չը տանելով ֆուրգոններից. վիրաւորվածներից մէկը մեռնում է ճանապարհին, իսկ մնացածներին վեր է առնում պօստի օմնիբուսը, որը մի 10 բօպէից յետոյ գալիս է այդ անցքի տեղը։ Այդ ամենը պատահում է երեկոյեան ժամի 4-ին։»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մայիսի 14-ին գիշերը սպանված է Ելենդորֆ կոլոնիայում, որը 7 վերստ հեռու է Գանձակից, մի կողակ, Լարինսկի կողակների գնդից, որը գտնվում է միշտ այդ կոլոնիայում։ Կողակի սպանութեան պատճառը և տեղը դեռ ևս որոշված չէ, որովհետև սպանվածին գտնում են կոլոնիայից հեռու և մի և նոյն ժամանակ ինքն սպանվածը խնդրած է եղել վախմիստրից, որ նրան թոյլ տան այլ տեղ քնելու այդ գիշերը։ Կարծում են որ այդ սպանութեան մէջ «կնոջ պատմութիւն կայ»։

—

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ հետևեալը. «Մորեխը շատացել է Գանձակի ու Բաղուի նահանգներում։ Ժողովուրդը մեծ քանակութեամբ ոչնչացնում է այդ սարսափելի թշնամուն։ Դաշտերում այժմ կը պատահէք մեծ թւով բանւոր ժողովրդին, որը մորեխ է կոտորում։ Հացի բերքը մեծ յոյսեր չէ տալիս։ Արտերը շատ զանազանվում են լաւութեան կողմից։ Լաւի հետ շատ վատն էլ կը գտնէք։ Կարելի է ասել որ դեռ ևս հացագործների դրութիւնը միջակ է։ Բայց մի սարսափելի թշնամի էլ է երևան գալիս, որը շատ վտանգաւոր է հացերի համար. այդ դաշտային մուկն է, որ շատանում է մեծ քանակութեամբ. դրա դէմ արդէն ամենքն էլ թոյլ են և ոչինչ միջոց դեռ ևս չէ հնարած այդ թշնամու դէմն առնելու համար»։

—

Լսում ենք, որ Թիֆլիսի նահանգական իշխանութիւնը թոյլատրել է Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդին բանալ իր ձեռքի տակ գրատուն-ընթերցարան (библіотека для чтенія)։

—

Երեքշաբթի, մայիսի 19-ին, Թիֆլիսի աղնուականների կալուածական բանկի ընդհանուր ժողովի վերջին և բազմամարդ նիստն էր։ Ընթացիկ մի քանի հարցեր քննելուց յետոյ, կատարվեց պաշտօնական անձանց ընտրութիւնը։ Պէտք է ընտրվէին՝ վերատեսուչ մասնաժողովի մի անդամ, բանկի վարչութեան մէկ անդամ և երկու գնահատողներ։ Ընտրվեցան՝ իշխան Պ. Գրուզինսկիյ—վերատեսուչ մասնաժողովի անդամ, բանկի վարչութեան անդամի պաշտօնի համար քուէարկվում էին երկու հոգի՝ իշխան Դ. Ավալով և բանկի հաշուապահ իշխան Դ. Պավլէնով, որոնցից առաջինը ձայների առաւելութեամբ վարչութեան անդամ ընտրվեց։ Գնահատողներ ընտրվեցան՝ իշխ. Ցիցիանով և Ա. Պուրցելաձէ, որոնք առաջ էլ նոյն պաշտօնն ունէին։

—

Բաֆայէլ Պատկանեանի օգտին սացանք օրիորդ Նունէ Մարկոսեանցի ձեռքով Թիֆլիսում հաւաքած 50 ռուբլի։ Աստրախանի օրիորդական դպրոցի ուսուցիչների ձեռքով հանգանակած 84 ր.։ Բաղուից, պ. Ծատուրեանցի և ընկ. գործընկերների մի խումբ արհեստաւորներից և ծառայողներից 23 ր., ընդամենը 157 ր։ Ուրեմն նախկին 811 ր. 20 կ. դումարի հետ այժմ ունենք 968 ր. 20 կոպէկ։

—

Ստացանք Մոսկվայում տպագրած մի վէպ, «Փոքրիկ Ատող» վերնագրով, աշխատութիւն Սանդալի։

—

Պետերբուրգի լրագիրները տպագրել են Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնը՝ նրա ընտրութեան առիթով։

—

Խ. Մալումեանի «Խրիմեան» վերնագրով կենսագրական աշխատութիւնը՝ օտար քաղաքներից առնել ցանկացողները կարող են դիմել թէ հեղինակին և թէ կենտրոնական գրավաճառանոցին։

—

Երեքշաբթի, մայիսի 19-ին, նորերս մեր քաղաքն եկած Պետերբուրգի կայսերական թատրոնների արտիստների ընկերութիւնը Վ. Միչուրինա-Սամոյլովայի, Վ. Դավիդովի, և Պ. Լէնսկու մասնակցութեամբ քաղաքային թատրոնում տուաց իր առաջին ներկայացումը։ Խաղացին «Աշխ» 1 արարուածով և «Վերադարձած բաղդ» 3 արարուածով կոմեդիաները և «5-րդ օթեակակարգի դիլետանտ» պիէսան։ Մենք վաղուց մեր քաղաքային թատրոնի բեմի վրա չէինք տեսել մի այդպիսի աջող ներկայացում։ Թէ պիէսաների ընտրութիւնը և թէ դերասանների ու դերասանուհիների շնորհալի խաղը նպաստում էին ներկայացման աջողութեանը։ Մանաւանդ հասարակութեան բուռն ծափահարութիւններին արժանացաւ պ. Դավիդով, որը իր բնական և գեղեցիկ խաղով դրաւեց ամբողջ հասարակութեան համակրութիւնը։ Թատրոնը լի էր։

—

Մայիսի 3-ից առաջ մենք հաղորդեցինք, որ պ. Աբգար Յովհաննիսեան պատգամաւոր է նշանակված Բրուսայի և Եգիպտոսի թեմերի կողմից, ինչպէս հաղորդել էին և միւս լրագիրները։ «Արձագանքը» իրան յատուկ ոճով պատասխանեց մեզ, թէ այդ լուրը չինծու է, և որ պ. Յովհաննիսեան ոչ թէ նշանակվել է, այլ ընտրվել է Եգիպտոսի և Բրուսայի թեմերի պատգամաւոր, ինչպէս ընտրվել են և միւս պատգամաւորները։ Այժմ բանից դուրս է գալիս, որ «Արձագանքը» ինքն է հաղորդել չինծու լուր, և այն էլ, ի հարկէ, դիտմամբ։ Էջմիածնի համազգային ժողովի ցուցակից (որ նոյն իսկ ինքը «Արձագանքն» էլ է տպել իր № 55-ի մէջ) երևում է, որ Եգիպտոսը երբէք չէ ընտրել պ. Յովհաննիսեանին պատգամաւոր, և այդ մասին ոչ մի տեղ ոչ մի խօսք չը կայ ասված։ Ուրեմն ո՞րտեղից առաւ «Արձագանքը» այդ չինծու լուրը, որը և փառաւորապէս հաղորդեց։ Իսկ ինչ վերաբերում է Բրուսայի կողմից պատգամաւոր ընտրվելուն, դրա ներքին արժէքն էլ պարզ երևում է «Մշակի» անցեալ համարում տպագրված «Կաթողիկոսական ընտրութեան պատմութիւնից», որից երևում է, որ պ. Յովհաննիսեան միայն ապրիլի 22-ից յետոյ է ընտրվել... Ի՞նչ ունի ասելու «Արձագանքը» և այս փաստերի դէմ։

—

Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը մտադիր է նշանակել տարեկան մրցանակ՝ արժանաւորագոյն աշխատութիւնների համար։ Այդ հարցը կը ներկայացվի առաջիկայ ընդհանուր ժողովի քննութեան։

—

Արտասահմանի մամուլի մէջ բաւական մանրամասն տեղեկութիւններ են տպագրված Խրիմեան Հայրիկի ընտրութեան և անձնաւորութեան մասին։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց մի նոր գիրք, որը տպագրված է Ալէքսանդրօպոլում։ Գրքի վերնագիրն է «Հայ աշուղներ», աշխատութիւն Գ. Լևոնեանի։ Աշխատասիրողը այդ գրքի մէջ հաւաքել և ամփոփել է զանազան տեղեկութիւններ բաղմաթիւ աշուղների կեանքի և երգերի մասին։ Գիրքն արժէ 30 կոպէկ։

—

Երկուշաբթի, մայիսի 18-ին, կայացաւ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, ներկայութեամբ աւելի քան 40 անդամների։ Ժողովում կարդացվեցին և հաստատվեցին ինչպէս անցեալ տարվայ հաշիւը, այնպէս և այս տարվայ նախահաշիւը։ Նախահաշիւով ընկերութիւնը այս տարի մուտք սպասում է 5530 ռուբլի, և համարեա թէ նոյնքան էլ ծախս է նախատեսված։ Հաշիւները հաստատելուց յետոյ ժողովը զբաղվեց հայ վարժուհիների համար կուրսեր պահելու խնդրով, մի հարց, որը թէ անցեալ և թէ այս տարի յարուցեց տիկին Լ. Թամամշեան։ Ինչպէս յայտնի է անցեալ տարի ընկերութիւնը բացեց այդ կուրսերը, որոնց նպատակն էր միջոց տալ հայ վարժուհիներին պատրաստվել և քննութիւն տալ, օրինական վկայական ձեռք բերելու համար։ Տարաբաղդաբար մեր վարժուհիները բաւական անտարբեր գտնվեցան և կուրսերին յաճախողների թիւը շատ քիչ էր։ Այս տարվայ վերաբերութեամբ ընդհանուր ժողովը ձայների մեծամասնութեամբ սկզբունքով վճռեց շարունակել կուրսերը։ Նոյն ժողովը, տիկին Սարգսեանի առաջարկութեամբ, ընտրեց երեք հոգուց բաղկացած մի մասնաժողով, որի պարտքն է մշակել այն հարցը, թէ ինչ միջոցներով և ինչ կերպով կարելի է բանալ կուրսերը։ Ժողովի վերջում տեղի ունեցաւ վարչութեան երեք անդամի և երեք փոխանդամի ընտրութիւն։ Անդամներ ընտրվեցին՝ օր. օր. Մութաֆեան, Արղութեան և Աբեթանդիլեան։ Վերջինը հրաժարվեց անդամ լինելուց՝ և նրա տեղն անցաւ ձայների կարգով՝ տիկին Տէր-Յովհաննիսեան։ Փոխանդամներ ընտրվեցին՝ Աբեթանդիլեան, Արասխանեան և Մամիկոնեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Թէհրանից Լօնդոնի լրագիրներին հաղորդում են, որ այս օրերս Մէշէդից Տուրբէտի գնացող ռուս բժիշկը հաստատեց, որ Մէշխէդի շրջականերում յայտնեցան ասիական խոլերայով վարակվելու դէպքեր։ Մահվան դէպքեր սակայն քիչ են,

սերէն ընագիրները։ Մայիսի 4-ին, երբ Հ. Առաքելեանի ճառը միաձայն ընդունվեց, արձանագրութեան իրաւ հիմք ընդունվեց այդ ճառը, որի համառօտ բովանդակութիւնը արձանագրվեց և որովհետև այդ արձանագրութիւնը բոլոր ընտրողների ստորագրութեամբ պիտի ներկայացվի Վեհափառ Կայսրին, ուստի պրօկուրօրն արձանագրութիւնը կազմեց ռուսերէն լեզուով, բայց ի նկատի ունենալով, որ ընտրող պատգամաւորներից շատերը ռուսերէն չը գիտէին և համազգային ընտրողական ժողովի բոլոր դրագրութիւնը կատարվում է այն լեզուով, որով հայոց եկեղեցին վարում է իր գործերը, ուստի որոշվեց արձանագրութեան հայերէն ընագիրն ևս պատրաստել։ Ահա այդ պատրաստած հայերէն ընագիրը մայիսի 5-ին, պ. պրօկուրօրը կարդաց ժողովի մէջ, որ ստորագրեցին բոլոր 72 ընտրողները։

Ապա երբ ժողովին կարդացվեց այս արձանագրութիւնը, մի փոփոխութեամբ ուղղվեց այն մասը, ուր ասված է արքեպիսկոպոս Խրիմեանի մասին, այն է թէ նորին բարձր սրբազնութիւնը յայտնի է իր օրինապահութեամբ, այսինքն կարողութեամբ տալ զԱստուծոյն Աստուծոյ և զկայսերն կայսր—այն մտքով, թէ այդ յատկութիւնով օժտված է ոչ միայն Խրիմեան առանձնապէս, այլ բոլոր և միւս հոգևորականներն ըստ իւրանց հոգևոր կոչման և մանաւանդ ընտրեալ կանդիդատները։

Ժամը 3-ին միաբանութեան սեղանատան զանգակը ճաչի է հրաւիրում։ Այդ օրը պաշտօնական ճաշ է, որին ներկայ են և բարձր իշխանութեան ներկայացուցիչ պ. Պրիբիլ, պրօկուրօր Կանչելի և այլ աստիճանաւորներ, «Кавказъ» լրագրի խմբագիր պ. Միլիւտին, մամուլի ներկայացուցիչներ և զանազան քաղաքներից եղած բազմաթիւ հիւրեր։ Մօտ 200 հոգի սեղան են նստած. դուրսը ժողովուրդը կանգնած հանդիսատես է։ Բազմաթիւ կենացներ առաջարկվեցան և շատ ճառեր խօսվեցան։ Տեղապահ սրբազանն առաջարկում է Օգոստափառ Կայսրի կենացը, որ խմվում է անվերջանալի ծափահարութիւնների, կեցցէների մէջ։ Ճեմարանի երգեցիկ խումբը երգում է «Տէր կեցո զԿայսրն» երգը։ Պ. Պրիբիլ շնորհակալութիւն յայտնելով յանուն Կայսերական կառավարութեան, իր կողմից առաջարկում է բաժակ հայ լուսաւորչական եկեղեցու բարօրութեան և պայծառութեան համար և ուրախութիւն է յայտնում, որ ընտրութիւնները կատարվեցին օրինակելի կարգապահութեամբ և գիտակցական վերաբերութեամբ դէպի վեհ գործը։ Այս ճառը հայերէն թարգմանում է պ. Մէլիք-Ադամեանը և ընդհանուր ոգևորութիւն է յարուցանում։ Ապա խմում են Օսմանեան վեհ. Սուլթանի, պարսից արեգակնափայլ Շահի կենացները։ Տեղապահ սրբազանն առաջարկում է խմել Հայրիկի կենացը, որն ընդունվում է աքանչելի հոգեմայլութեամբ։ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան հայոց եկեղեցու և հայրապետական գահի ու Էջմիածնի անսասան պահպանութեան համար։ Այդ կենացի վրա խմբովին հանդիսականներն երգում են «Էջ Միածին ի Հօրէ» շարականը։ Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփան եպիսկոպոսը խիստ պատէտիք ոճով և զգացված ճառում է համերաշխութեան և սիրոյ մասին։ Սմբատեան Մեսրովբ արքեպիսկոպոսը յիշեցնելով, որ Ամենաողորմած Կայսրի հովանաւորութեան ենք պարտական այն ազատութիւնը, որով կատարեցինք մեր եկեղեցու պետի ընտրութիւնը և գնահատելով այն աջակցութիւնը, որ հայթայթեց Կայսրի իշխանութեան ներկայացուցիչը մեր երկրում, առաջարկում է խմել Կովկասեան կառավարչապետ Շերէմէտէվի կենացը, որն և ընդունվում է ամենամեծ ուրախութեամբ և երգով։ Ապա Բեսարաբիայի պատգամաւոր պ. Մամիկոնեան ոգի կանգնելով առաջարկում է խմել ընտրեալ երկրորդ կաթողիկոսացու—Իզմիրլեանի կենացը։

Ամերիկայի հայ դաղթականութեան կողմից Պարսկաստան գնացած պատուիրակ Սառաֆեան խօսում է այն մասին, որ Ռուսաստանի մեծազօր Կայսրի դէպի հայ ազգը ցոյց տուած վստահութիւնը հետևանք է հայերի հաւատարմութեան և նրանց զանազան ասպարէզներում ցոյց տուած լաւ ծառայութեան։

Պ. Գր. Արծրունի առաջարկում է Տեղապահ սրբազանի կենացը այն զեղեցիկ հիւրասիրութեան համար, որով նա ընդունեց ամենքին և այն անաչառութեան համար, որով նա վարեց ընտրական գործը։

Սրբազան Արիստակէս Սեդրակեան իր խորին ուրախութիւնն է յայտնում նրա համար, որ ընտրութիւնները խաղաղութեամբ, հանդարտութեամբ և համերաշխութեամբ կատարվեցին շնորհիւ ժողովի անդամների գործունէութեան, ուստի առաջարկում է բոլոր պատգամաւորների կենացը խըմել։ Հ. Առաքելեան, մի անգամ ևս արծարծելով և բացատրելով իր ճառի այն կէտը, որը վերաբերում է Խրիմեանի օրինապահութեան և յատկութեան տալ զԱստուծոյն Աստուծոյ և զկայսերն կայսր, բացատրելով որ հայերը Ռուսաստանում համակված են միայն օրինապահական ձգտումներով, առաջարկում է խմել բարձր իշխանութեան ներկայացուցիչ Պրիբիլի կենացը։ Պ. Ն. Աթաբէկեան առաջարկում է խմել սինոդի պրօկուրօր պ. Կանչելու կենացը։ Բժիշկապետ Նեվրուզեան՝ լուսաւորութեան և մտքի մշակների ու ախոյեանների կենացը։ Կիւլբէնկեան էֆէնդին առաջարկում է Էջմիածնի միաբանութեան, ճեմարանի կենացը յանձին սրբազան Սեդրակեանի։ Ապա հետզհետէ խօսեցին Սառաֆեան (երկրորդ անգամ), սրբազան Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, սրբազան Սահակ եպիսկոպոս Խապայեան, սրբազան Օրմանեան, Համբ. Առաքելեան (երկրորդ անգամ), Փափազեան։ Ես միայն համառօտ կերպով յիշում եմ կենացները և անունները, որովհետև արդէն «Մշակ» լրագրից այդ օր խօսված ճառերի բովանդակութիւնը յայտնի է։ Այս կասեմ, որ այդ օր ոգևորութեան և ուրախութեան չափ ու սահման չը կար և այդ ընդհանուր հոգեկան տրամադրութիւնը ընտրութեան յաջող ելքի արդիւնքն էր։

Ժամը 5-ին երբ վերջանում է ճաշը, հանվում է պատգամաւորների, այն է ընտրողական ժողովի խմբական լուսանկարը։

Հ. Առաքելեան

(Կը շարունակվի)

և եթէ այժմ և եթ սանիտարական միջոցներ ձեռք առնեն, հաւանական է, որ այդ սարսափելի հիւրին կարելի կը լինի կանգնեցնել սահմանի վրա։

—Կոպէնհագէնից «Indep. Belge» լրագրին հաղորդում են, որ դանիական թագաւորական զոյգի ոսկէ հարսանիքի առիթով պապը կուղարկի իր սեփական ձեռքով գրած նամակ Դանիայի թագաւորին։

—Լօնդօնում այս օրերս լուր տարածվեց անարխիստների մի դաւադրութեան մասին, որը նպատակ ունէր օդը թունաւորել պարլամենտի շինութիւնը։ Ոստիկանութիւնը, տեղեկացած լինելով անարխիստների դիտաւորութիւնների մասին, շտապեց զգուշութեան եռանդուն միջոցներ ձեռք առնել։ Գաղտնի ոստիկանութեան բազմաթիւ պաշտօնեաներ կանգնած էին շինութեան առջև ոչ միայն քաղաքի կողմից, այլ և Թէմզա գետի կողմից։ Պարլամենտի շինութեան մէջ մտնողները ենթարկվում էին խուզարկութեան։

—Հռոմի լրագիրներից երևում է, որ պապի և Ֆրանսիայի միապետական կուսակցութեան մէջ կատարեալ անհամաձայնութիւն է տիրում։ Այդ քանը իրանք միապետականներն ևս չեն ծածկում, որոնք յոյսը կորցնելով պապի պաշտպանութեան վրա, դադարեցին իրանց իսկական նպատակները կրօնական շարժառիթների տակ ծածկել և ուղղակի քաղաքական կուսակցութիւն են իրանց հռչակում։ Պապի դեսպանը արդէն հաղորդեց Լեւոն XII-ը պապին, որ պապի վերջին կոնդակից յետոյ ևս միապետականները մոռդրութիւն չունեն հաշտվել հանրապետութեան հետ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի։ Երաշտութիւնից ճնաված նահանգներից, մայիսեան անձրևներից յետոյ, բարեյաջող տեղեկութիւններ են ստացվում ցորենի հունձի մասին։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ, 18 մայիսի։ Երէկ տեղի ունէր ժողովրդի հանդիսաւոր ընթացք դէպի Ամալիենբօրգ, դանիական թագաւորական զոյգի ոսկեհարսանիքի տեղը։ Ընթացքը, որին մասնակցում էին մօտ 100,000 հոգի, 117 զանազան կօրպօրացիաների անդամները դրօշակներով և երաժշտութեամբ, տևեց մօտ երեք ժամ։ Ուսանողները ձեռքերում բռնած ունէին կանաչ թեղջևայ ճիւղեր. ուսանողական խումբը շարժական կանաչ անտառի էր նման։ Ազգային զոյգը աղջկանների և հիւրերի հետ միասին դուրս եկաւ պատշգամբը, և ընթացքը անցնում էր ոգեորված բացագանչութիւններով։ Խրիստիան թագաւորը դիմեց ուսանողներին մի կարճ ճառով։ Երէկ երեկոյեան այստեղի բարձր հասարակութիւնը ուշադրութիւն սարքեց ի պատիւ արքայական զոյգի։ Կենդանի պատկերներ տրվեցան Խրիստիան թագաւորի և Լուիզա թագուհու նշանադրութեան և պսակադրութեան ժամանակներից։ Զահավառ պարը կատարեցին արիստոկրատիային պատկանող տիկինները և կավալէրները։

ՐԻԳԱ, 18 մայիսի։ «Бородино» նաւը, որը եկել է Նիւ-Եօրկից, բերել է 14,000 պուդ ալիւր, որը նուիրել են ամերիկացիները, յօգուտ Ռուսաստանի սովեալների։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մայիսի։ «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ երէկ պետական խորհրդում վերջացաւ քաղաքային Պոլօժենիէի քննութիւնը։—«Пет. Вѣд.» լրագիրը լսել է, որ հաստատվել է Պերմի տնայնագործական արդիւնաբերական բանկի կանոնադրութիւնը։

ԲԵՐԼԻՆ, 19 մայիսի։ Թագուհին և Նեդերլանդիայի թագուհի-խնամակալուհին երէկ երեկոյեան հասան, Պոտսդամի մօտ Վիլհելմարկ երկաթուղային կայարանը, որտեղ դիմաւորեցին նրանց կայսերական զոյգը, պրուսական և գերմանական պրինցները և զանազան պաշտօնեաներ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 19-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	94 ր.	65 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	46 ր.	37½
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	50 »
Ոսկի — — արժէ . .	7 »	57 »
Մաքսայի կուպօններ — . .	151 »	50 »
Արծաթ — — — . .	1 »	10 »
Բօրսային դիսկօնտեր — . .	4 »	5½ »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	103 »	25 »
— — — — 2-րդ — . .	103 »	37 »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	25 »
6% ոսկեայ րէնտա	156 »	— »
4% ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	103 »	— »
— — — 3-րդ —	104 »	25 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	241 »	50 »
— — երկրորդ —	220 »	— »
Պետական երկաթուղային րէնտա.	104 »	— »
5½ րէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	95 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102 »	— »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — .	193 »	— »
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	104 »	50 »
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկերութ. մետալ. .	146 »	— »
— — — թղթադ. .	102 »	37 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	101 »	87 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	55 »
Օդէսայի — — .	102 »	25 »
Թիֆլիսի — — .	98 »	75 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101 »	50 »
— — Քութայիսի — .	101 »	50 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ-ԽՄԲԱԳԻՐ՝ Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ ուրբաթ, 29 մայիսի (10 յունիսի), դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ LE QUADIANA (ԿՈՒԱԴԻԱՆԱ) նաւը, նաւապետ LAMANON (ԼԱՄԱՆՕՆ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգիստները։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՕԼԴԼՈՒՍՏ։ (№ 23) 1—2

ՓԱՅՏԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ (կայարանի մօտ, կօրդանօվի ձիաքաշի դծի վրա)։ Վաճառվում է մաս-մաս, սկսած 1/8 խորանարդ սաժէնից. չոր, խոհանոցի և հացագործների համար, ամենամատչելի գնով։ Նոյն տեղը գնում են մեծ քանակութեամբ փայտ անտառատէրերից։ № 56 1—10 (Հ.)

ՄԻ ՖՐԱՆՍՈՒՀԻ կամենում է դասեր ունենալ։ Հասցէն. Нѣмецкая улица, տուն № 5 (ձիաքաշի պատելու տեղը)։ (№ 56) 1—6

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ մատչելի գներով պատրաստում է աշակերտներ բոլոր հայ ուսումնարանների համար. յանձն է առնում պարապել նաև վերաքննութիւն ունեցողների հետ։
Հասցէն կարելի է հարցնել «Մշակի» խմբագրատանը։
(№ 55) 2—5

ՏՈՒԱԼԷՏԻ ՄԻՋՈՑ ՏԻԿԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БЕРЕЗОВЫЙ БАЛЬЗАМЪ
Д-РА ЛЕНГИЛЯ ВЪ ВѢНѢ.

Առնել կարելի է Ռուսաստանի բոլոր պարֆիւմերական և դեղագործական մագազիններում և մի քանի դեղատներում։

Գործ է ածվում երեսի մորթը և ձեռքերը լուանալու համար.

ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

Այդ բալզամի պատրաստութեան ժամանակ զլխաւորապէս ուշադրութիւն է դարձրած, որ նրա բաղադրութեան մէջ մտնեն բացառապէս նիւթեր, որոնք չեն վնասում մորթին։ ԳԻՆԸ սրուակի՝ 1 ր. 65 կոպ., Բէնզոյեան սապոն 35 և 50 կ. կտորը, Օպօ-պօմադ (կօլտ-կրեմից լաւ) 1 ր.

Դարսել և ուղարկել Եւրօպ. Ռուսաստան 70 կ., ասիական Ռուսաստան 1 ր. Գլխաւոր պահեստ ամբողջ Ռուսաստանի համար Վ. ԱՈՒՐԻԽԻ մօտ, Պետերբուրգում, Կոլոկոլնայա 18—19.
(91—№ 140) 6—7 (ամսի 15)

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Հ. Յ. ՕՐԲԷԼԻ
Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօր, եղ յետոյ։
(№ 145) 49—150

ՀԱՐԿԱՒՈՐ Է
Հայերէն լեզու լաւ իմացող մի հայ կին, կամ հայ օրիորդ, ընտանիքի մէջ ապրելու և մի երեխայի մասին հոգալու համար։ Ցանկացողները պէտք է համաձայնվեն Թիֆլիսից դուրս գնալ՝ ընտանիքի հետ միասին։ Հասցէն իմանալու համար կարելի է հարցնել «Մշակի» խմբագրատանը։ № 54 3—3

ПАРФЮМЕРІЯ ВИКТОРІА
МЫЛО ОЛЕО-ВАЗЕЛИНОВОЕ
РОЯЛЬ-КОНГО.
ДУХИ ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ИКСКОРОНАКСЪ
О-ДЕ-КОЛОНЪ РОЯЛЬ
О-ДЕ-КОЛОНЪ ЦВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ ЗАПАХОВЪ
Въ Высочайше утвержденномъ Кавказскомъ Товариществѣ торговли аптекарскими товарами въ Тифлисѣ и Баку.
(91—№ 57)

ՊՈՐՑԻՒՄԷՐԻ
ՎԻԿՏՈՐԻԱ-ՐԷԳԻՆԱ
օշո-վարդենեան սապոն
ՐՕՅԱԼ-ԿՈՆԳՕ
տեսակի
ամենարարձր
ՎԻՕԼԷՏ
ԻԿՍԿՈՐՕՆԱԿՍ
ՕԴԸՍՕԼՕՆ ՐՕՅԱԼ
ՁԱՆԱՁԱՆ
դեղագործական ապրանքների վաճառման բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում և բազում։
48—50 (Հ)

ԲԺԻՇԿ Ա. Յ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Ընդունում է ամեն օր առաւօտեան 10—12 ժամը, կէսօրից յետոյ 4—6 ժամը, աղքատներին ձրի. Ֆրէյլինսկայա փողոց, տուն № 6.
(№ 39) 10—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, Վ. օրենցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի
Դ. Գ. ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Մ. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Մ. Զ. ԹԱՆԱՆԵԱՆ—12—12½ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան։
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Բ. ԱԼԵԿՍԷՅԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար առանձին։
22—52 (Հ) 90—№ 79 Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

Дозволено, цензурою Тифлисъ, 20 Мая 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.